ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 86/09

Քաղ. Երեւան 22 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2009թ. դեկտեմբերի 22-ի նիստում (արձանագրություն N75/2) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Ռ.Մանասերյանի 2009թ. նոյեմբերի 11-ի դիմումը N 4007 «ALPINE» ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 2009թ. դեկտեմբերի 2-ին սեփականատեր Alpine Electronics Inc-ին ներկայացված ծանուցման ստացման վերաբերյալ գործակալությունը հետծանուցում չի ստացել, ինչպես նաեւ բողոքարկման խորհուրդ ներկայացված դիմումի վերաբերյալ որեւէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել եւ՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 49-րդ կետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հետաձգել N 4007 «ALPINE» ապրանքային նշանի վերաբերյալ դիմումի քննարկումը եւ այն նշանակել 2010թ. փետրվարի 25-ին:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան